

ՔՍԱՆ ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միջին խաղաղատան մէջ.

Մեր հասցեն. Тифлис, Редакция „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաբանչիւր բառին 2 կոպեկ.
Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳԻՐԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱՌԱՋԻՆԿԱՅ 1899 ԹԻՒՆԿԱՆԻ

ՄՇԱԿ

(27-րդ ՏԱՐԻ)

ԴՐԱՎԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

«ՄՇԱԿԸ» ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՎԻ ՆՈՅՆ ՊՐՕԳՐԱՄՄՈՎ ԵՒ ՆՈՅՆ ՈՒՂԱՌԹԵԱՄԲ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 ռուբլի է, տասն և մէկ և տասն ամսվա-
նը՝ 9 ռ., ինն և ութ ամսվանը՝ 8 ռ., եօթ ամսվանը՝ 7 ռ., վեց ամսվանը՝ 6 ռ., հինգ ամսվանը՝
5 ռ., չորս ամսվանը՝ 4 ռ., երեք ամսվանը՝ 3 ռ., երկու ամսվանը՝ 2 ռ. և մի ամսվանը՝ 1 ռուբլի:
ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ա մ երկու և մի ամսվանը՝ 1 ռուբլի:
ՍՏԱՆԴԱՐԴԱՆԵՐԸ 30 ֆրանկ. Պարտական տանի բաժա-
նորդները՝ 10 ռուբլի:

«ՄՇԱԿԻՆ» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՍԱՆԸ (Բաղրանայա փողոցների անկիւն):

Կայտարարութեան ուրիշ քաղաքներէն «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար, և առհասարակ նամակներ և
ծրարներ ուղարկելու, պէտք է գիտնել հետևեալ հասցեով. ТИФЛИСЪ, Редакция „МШАКЪ“;
իսկ արտասահմանից՝ ТИФЛИС, Rédaction du journal arménien «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով:

Ա. Պ. Ա. Ռ. Ի. Կ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ 2 Է Ը Ն Գ Ո Ւ Ն Վ Ո Ւ Մ

Այլ քաղաքներէն Նիկիտի և Իւլիա Միխայլովնա թայրօվները յայտ-
նում են՝ ազգականներին, բարեկամներին և ծանօթներին, որ հինգշաբթի, զեկտեմբերի
3-ին, իրանց անժամանակ մասնացած թանկագին և անուսումնալի ազգայն

ՕՐ. ՄԱՐԻԱ ԱԼԷՔՍԱՆԴՐՈՎՆԱ ԹԱՅԻՐՈՎԻ

ժամկան տարեգրծի օրը, Դիդուբէի եկեղեցում, պատարագից յետոյ, ժամը 12-ին, հոգե-
հանգիստ կը կատարվի հանգուցեալի գերեզմանի վրա:

2—2

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ողջունել պէտք է. Թոն թէ մեռնա. ՆեմֆիՆ
ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ո՛վ պէտք է մտածի. Մատենագրու-
թիւն. Նամակ երեսնից. Նամակ Խմբագրութեան.
Ներքին լուրեր. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նա-
մակ Թիւրքիայից. Արտաքին լուրեր. Հեմ-
ֆիլմեր. ԲՈՐՍԱ. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Եանկին և Անգլիացին:

ՈՂՋՈՒՆԵԼ ՊԵՏԻ Է

Երգուեալ դատաւորների հաստատու-
թիւնը Կովկասում մտցնելու հարցը, որ
վաղուց յարուցված և զրկած է, իբրև
մեր երկրի քաղաքացիական կեանքի կեն-
սական պահանջ, այժմ արդէն լուծվելու
վրայ է: Մինչև այսօր այդ հարցի մասին
դատում, խօսում էր մամուլը, մինչև այ-
սօր նա քննվում էր հասարակական հաս-
տատութիւնների և ուսումնական ընկե-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Ե Ա Ն Կ Ի Ն Ե Ի Ա Ն Գ Լ Ի Ա Ց Ի Ն
Մաքս Նօրդհաուս

Մի քանի բառէ առաջ մեր գնացքը դուրս ե-
կա Օտտենդէից: Այն կուպէտ, ուր ես էի
գտնվում, ճանապարհորդների որոշ թիւ կար,
այն է՝ վեց, և ամենքը, բացի ինձից, պատկա-
նում էին անգլո-սակսոնական ցեղին: Շուտով
մեր մէջ սկսվեց աշխոյժ խօսակցութիւն. հարե-
ւաններս բարձր խօսելու ձևից և արտասանու-
թիւնից ես իսկից իմացայ, որ նրանք իսկական
ամերիկացի են: Մի հաստ պարուն միայն, որը
ճանապարհորդական տարօրինակ հագուստ ու-
նէր, չէր մասնակցում մեր խօսակցութեան և
իմ հարեանների նկատողութիւնների վրա, ո-
րոնք նրան էին վերաբերում, նա ոչ մի ուշա-
դրութիւն չէր դարձնում, այնպէս որ կարելի էր
կարծել, թէ նա անգլիկներէն չէ հասկանում: Բայց
յանկարծ նա Լօնդօնի մաքուր բարբառով դի-
մեց մի պարոնի, որը պատրաստվում էր վառելի
լիւնիակի և արօղ. I object to your smoking,
Sir, I am not aware, that this is a smoking-
sariage! (Ես չգիտեմ եմ ձեր ծխելու դէմ, յար-

բութիւնների ու ժողովների մէջ և քննը-
վում էր, ի հարկէ, միայն տեսականապէս:
Բազմաթիւ ջատագովների, կողմնակիցների
հետ միասին, նա ունէր և կատարի հա-
կաւորներ, որոնք, սակայն, ինքրի վրա
նայում էին ոչ թէ սկզբունքի, այլ լոկ
անձնական հակակրօթեան և նեղ ազգայ-
նական տեսակէտից: Արդարադատութեան,
պետական ընդհանուր շահերի տեսակէտը
այդ մարդկանց ամենէն չէր հետաքրք-
րում: Բարեբաղդաբար, այդ տեսակ հակա-
ռակորդների թիւը շատ քիչ էր և այդ
հակառակորդները յայտը ստիպված են
խոստովանելու, որ իրանք կատարեալ պար-
տութիւն կրեցին: Այժմ պաշտօնապէս
յայտնի է, որ ինքրիք տեսական հոյից
արդէն զրկել է զործնական հոյի վրա.
արդարադատութեան միջնորդութիւնը ին-
քն է այժմ յարուցել Կովկասում երգ-
ւեալ դատաւորների հաստատութիւնը
մտցնելու հարցը: Այդպիսի միանգամայն
ձեռնհաս նախաձեռնութիւնը այլ ևս ոչ
մի կասկած չէ թողնում, որ շատ հեռու
է այն օրը, երբ Կովկասը կը վայելի Ա-
լեքսանդր II-ի դատաստանական բարեբա-
րէֆօրմները իր ամբողջութեամբ և երգ-
ւեալ դատաւորների հաստատութիւնը կը
տայ մեր երկրին այն ահաբեկ օգուտնե-
րը, որ նա արդէն տուել է կայսրութեան
միւս մասերին, ուր այդ հաստատութիւնը
վաղուց գործում է:

Այդ կողմից մենք կատարելապէս հա-
մամտ ենք մայրաքաղաքի առաջատու մա-
մուլի այն մի քանի օրդանների հետ, ո-
րոնք ապացուցանում են, որ եթէ եր-
գուեալների դատարանը անհրաժեշտ է
Ռուսաստանի համար, նա ևս առաւել ան-
հրաժեշտ է Կովկասի համար, մի միտք,
որ քանիցս ապացուցել է և մեր լրագիրը:
Նա ահա ինչու:

Արդարադատութեան գործը՝ բարդ և
պատասխանատու գործ է. կանօնաւոր,
անշեղ և անսխալ կերպով վարելու համար
հարկաւոր է, որ դատաւորը ոչ միայն օ-
րէնք իմանայ, այլ և անպատճառ ծանօթ
լինի տեղական կեանքին, տեղական ազգա-
բնակչութեան սովորութիւններին, աշխար-
հայեցողութեան և նրա կենցաղական պայ-
մաններին և մասնաւոր տեղական լեզու-
ներին: Այդ յատկութիւնները անհրաժեշտ
են այնպիսի մի երկրում, ուր փոքր տա-
րածութեան վրա բազմաթիւ ցեղեր և
ժողովուրդներ են ապրում, ուր կեանքը

«ԹՈՅՆ ԹԵՄԵՆՈՆ»

«Հասարակական կարծիքը թունաւորելու» ա-
մենամեծ ոճրագործութիւնն է մարդկութեան
դէմ. նա անխնայութիւն է ծնեցնում բարոյա-
կանութեան չորանում: Այսպէս է սկսում «С.-
Петербург. Вѣдомости» լրագրի տաղանդաւոր աշ-
խատակից Վ. Գոլմարտեմ «Թոն թէ մեռնա»
վերնագրով յօդուածը:

Ինչ նորերս «Մշակ» մէջ մենք ցոյց տուինք
այն մեծ տարբերութիւնը, որ կայ եւրոպական
քաղաքականութեան խօսքի և գործի մէջ. խօս-
քով համակրել, իսկ գործով բացասել, արտա-

նրա հերոսներէն մէկին, իմ բարեկամ միտքը
Բրոունին, որ և պատմեց ինձ այդ անցքը: Սը-
բանից երկու տարի առաջ միտքը Բրոուն
առեւտրական գործերով ճանապարհորդեց Չիլի:
Նա Լիվերպուլում նստեց նաւ, որը պատկա-
նում էր Pacific Steam Navigation ընկերութեան
և առանց արկածների ժամանեց Վոստոկից, ո-
րտեղ ճանապարհորդների թիւը զգալի կերպով
աւելացաւ: ճանապարհին յանկարծակի սաս-
տիկ փոթորիկ բարձրացաւ, որի հետքին նաւը
դարձաւ ալիքների և քամու խաղալիք: Վերջա-
պէս նաւը դուրս նետուեց մի ժայռի վրա, ուր
և մնաց: Նաւապետը չը կորցնելով արիւթիւ-
նը, իսկ ինքը մնաց նաւի վրա, մինչև վերջին
ճանապարհորդի և վերջին նաւաստու մակոյկ
նստելը: Բայց ի դուր էին ժայռից հեռանալու
ջանքերը. ալիքները կործանում էին մակոյկները
մէկը միւսի ետեւից, և լուսւած էին յուսահատա-
կան ձայներ միայն, որոնք խղացնում էին փո-
թորիկ կոծը: Մակոյկները հետզհետէ սուզում էին,
իսկ ջրի մակերեսով վրա երևում էին տանջված
դէմքեր և կծկուած բռնցքներ, որոնք իսկոյն և
եթ նորից անցնողներն էին: Մի և նոյն վիճակին
ենթարկվեց և միտքը Բրոունի նստած՝ մա-
կոյկը. բայց երբ նա շուտ եկաւ, միտքը Բրոու-
նին և մի ուրիշ ճանապարհորդի աշողվեց կախ-
վել մակոյկի ժայռից և մեծ ջանքերից յետոյ՝

բարձրանալ նրա վրա: Այդպիսի սարսափելի
գրոթեան մէջ նրանք մնացին մի քանի ժամ,
մինչև որ ալիքները դուրս գցեցին նրանց մօ-
տակալ փոքր կղզու աւազուտ ափը: Թէև մահ-
վան վտանգն արդէն անցել էր, բայց և այնպէս
միտքը Բրոուն իր դրութիւնը համարում էր
անուսանելի: Նա միջնորդութեան նշող անգամ
չէր գտնում այն մտքի մէջ, որ կարող է, ինչ-
պէս մի նոր Ռօբինզոն, հերոս դառնալ երգերի
մէջ. որովհետև նա գիտէր, որ եթէ ժամանակին
չը հասնէ Վալպարայսո, մեծ փող կը կորցնէ.
բայց և այնպէս նա աշխատում էր կարեւոր
չափ հաշուել իր դրութեան հետ: Փոքր ինչ
հանգիստ առնելով և չորացնելով հագուստը ա-
րեւի տակ, միտքը Բրոուն մի դրօսանք կատա-
րեց կղզու վրա և մի ժամում չրկեց ամբողջ
կղզին: Նա շուտով համոզվեց, որ կղզին անբնակ
է, բայց մի և նոյն ժամանակ՝ որ այդտեղ կան
բաւականաչափ ծառեր, թռչունների ընկեր, ազ-
րիւրներ և քարանձաւներ, այնպէս որ կարելի
էր մի առ ժամանակ ապրել: Շուտով նա մի
բարձր ծառի տակ մամուռից և տերեւներից բնի
նման մի բան շինեց, վճռելով, հարկ եղած դէպ-
քում, մնալ այդտեղ, մինչև որ բազմաւոր առի-
թը հնարաւորութիւն կը տայ նրան, ազատվել
այդ սոսկալի դրութիւնից: Նրա դիմադրութեան
ընկերը նոյնն արեց. կղզին չրկելուց նա մի յար-
մար քարանձաւ գտաւ, որտեղ և տեղաւորվեց:

(Կ. շարունակվի)

դժուարութիւններէ հետ է կապուած:—Հեղինակն իր գրութեան վերջն առաջարկում է նաև մի քանի օրինական բէ ֆ օ ր մն եր մտցնել ապա-հովագրութեան գործը կանոնաւորելու համար Թիւրքիայում... Երկրորդ կը սպասէ նա, եթէ այդ բէ ֆ օ ր մն եր րուրը կերպով է առաջարկուած...

II
Վերջերս Պարսկոյ սկսեց հրատարակել «La Russie» ամսնոցով մի շաբաթական, որի նպա-տակն է ծանօթագցնել ֆրանսիացիներին Ռու-սաստանի քաղաքական և տնտեսական կեանքը և Ռուսաստանում գործող ֆրանսիական ար-դիւնաբերութիւնը: Ինչպէս տեսնուած ենք նոյեմ-բերի 1-ի համարէն (№ 10 և 11), շաբաթա-թերթը խմբագրուած է բաւական աշուղ կերպով, տեղեկութիւններ է տալիս ռուսաց առևտրի և արդիւնաբերութեան զանազան ճիւղերի և այն-պիսի երևոյթիներ ժամանակ, որոնք կարող են դար-դացնել երկու դաշնակից երկրներին առևտրա-կան փոխադարձ յարաբերութիւնները, թէև մին-չև հիմա եղած փորձերից երևում է, որ ֆրան-սիացիք, համեմատելով անգլիացիներին և գեր-մանացիներին հետ, շատ քիչ աշուղութիւն են ու-նենում մեզ մօտ՝ թէ զուտ առևտրական և թէ հանրային ձեռնարկութիւնների մէջ: Վերջոյնչեալ համարում «La Russie»-ի խմբագրութիւնը շատ համակրական մի յօդուած է նուիրել «Россія Вѣдомостѣ» լրագրին, որս հիմնարկութեան 35-ամեակի առիթով:

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

Նոյեմբերի 25-ին

Գաղաքային դոմայի այսօրվայ հերթական նիստում քաղաքապիւ հարցերի շարքում նշանակ-ված էր նաև քաղաքային վարչութեան երկու անդամներին ընտրութիւնը: Այս ընտրութիւնն աւելի ազդեալ էր և բնորոշ, քան քաղաքապիւի ընտրութիւնը, որովհետև այս անգամ փառաւոր կերպով աչքի էին ընկնում խնամակալ կապե-րը և «խաթրի» շուկաները: Վարչութեան անդա-մութեան համար այնքան ցանկացողներ կային և այնքան մարդիկ մէջ ընկան, այնքան նամակ-ներ գրվեցան սրան-հրան՝ այս կամ այն անձի ընտրութիւնն աշուղացնելու, որ ձայնաւորները չը դիտէին ուս վրա կանգ առնել, ժամանակը որ մեզանում խնամակալ կապերը դեռ ևս ո-րոշ չըբանի մարդկանց մէջ շատ գործը են և այդ պատճառով էլ այս անգամ մօտ 15 ցան-կացողներից և 7—8 քուէարկողներից միմիայն մէկն ընտրվեց, ընտրողների կէսից շատ ձայներ ստանալով, իսկ միւսները բոլորն էլ սեպացան: Թերթիկներով ձայներ հաւաքելիս կանդիդատնե-րից մի քանիսը հրաժարվեցին տուփեր դնելուց, ձայների անշան թիւ ստանալու պատճառով: Գուէարկողներից Ա. Բուրիսկանց ընտրվեց 37 ձայնով—ընտրողների թիւով 46 էին: Ա. Տէր-Աւետիքեանց, որը նոյնպէս ընտրվեց, մեծ շան-սեր ունէր, ստացաւ ընդամենը 17 ձայն, որով-հետև մի խումբ ընտրողներ փոխել էին իրանց թիւերնաւուն: Ասում են Տէր-Աւետիքեանի ձայներ բաժանողը եղել է Ա. Տէր-Անդրէասեանց, որը ստացաւ 15 ձայն. Ա. Այդինեանց և Մ. Տէր-Սարգսեանց, չանցնելով ձայնեքիճ, ստացան ըս-պատճից աւելի ձայներ—20, 15. չընտրվեց նոյնպէս Մէլի-Բեկ Սուլթանով—այժմեան քա-ղաքապիւի պաշտօնակատարը—ստանալով 9 թէ 10 ձայն:

Այսպիսով հին ուղարկւածը չանցաւ. և ոչ մէկը, այս երեւոյթով պէտք է չափել հին վարչութեան գործունէութիւնը վերջին տարիներ-ում: Գուէարկութեան այսպիսի հետեանքը շատ էլ անապաւելի չէր, եթէ ի նկատի ունենանք ցանկացողներին և կուսակցութիւններին թիւը: Այդպիսով լրացուցիչ ընտրութիւնը թողնվեց յաջորդ նիստին, սակայն հենց այժմեանից ըզ-բացնելու է այն հարցը, թէ ո՞վ պիտի լինի այն թեկնածուն, որի վրա կարելի լինի ընտրողների մեծամասնութեան ցանկութիւնը կենտրոնացնել: Մի քանի թուրք ձայնաւորներ հարց են դնում՝ մի անգամ ընտրել թուրքերից. այդ բանին համակարծիք են նաև մի քանի այլ ձայնաւոր-ներ, բայց այդ դեռ ևս վերջնական բան չէ կա-րելի համարել և որոշ չէ կարելի ասել, թէ ո՞վ կը լինի երկրորդ անգամը. թէ ևս այժմեան քուէ-արկողների մէջ արժանաւոր համարվում է Ա. Տէր-Աւետիքեանը: Այսպէս լրացուցիչ ընտրու-թեան և տեսնելը, թէ այս ընտրութիւնները որքան են համապատասխանում քաղաքապիւի աշուղ ընտրութեան:

Աւերորդ չենք համարում արձանագրել մի տը-գեղ երեւոյթ այս ժողովից: Թերթիկներով ձայ-ներ հաշուելիս կարդացվեց նաև մի վաճառակա-նի անուն, իրը ծաղրելու մտքով, և այդպիսի փողոցային վարմունք, ասում են, իրան թող է տուել մի վաճառական:

Ա.—Դո

ՆԱՄԱԿ ԽՐԱԳՐՈՒԹԱՆ

Թիֆլիս, դեկտեմբերի 2-ին

«Մշակի» երկվայ համարում զարմանքով կար-դացի, իբր թէ Թիֆլիսի հայ կաթողիկոսները լա-տին քանաններից հալածված՝ ստիպված են խնդրամատոց լինել նոր եկեղեցի շինելու քա-ղաքի հայ-կաթողիկոսների համար: Թիֆլիսում հայ-կաթողիկոսներն արդէն 1806 թ.ից ունեն իրանց սեփական եկեղեցին, որ գտնվում է Միջի-փողոցում և ունի Ս. Աստու-ածածին անունը: Եկեղեցին հիմնված, շինված և վերանորոգված է հայ-կաթողիկոսների ձեռքով ու փողով: Այդ եկեղեցուն, որպէս ծխական քա-հանաներ՝ ծառայել են Տէր Պետրոս Բուրիսկան, Տէր Անտոն Միքայելան, Տէր Յակոբ Զաքարեան, Տէր Պողոս Լազարեան, Տէր Պետրոս Աղոյեան, Տէր Պետրոս Միչկոյեան: Սրանք բոլորն էլ ա-մուսնացած քանաններ էին և մայրենի լեզուով կատարում էին ժամատարութիւն, յետոյ հայր Զաքարիա վ. Գուրգենեան և այժմ հ. Գաբրիէլ վ. Նահապետեան: Այդ եկեղեցին կառավարու-թիւնը պաշտօնապէս ճանաչում է որպէս հայ-կաթողիկոսի եկեղեցի, լատին քանանն այստեղ խառնվելու ոչինչ չունի, քանի որ լատինները կամ ինչպէս իրանք ասում են՝ «հոռոմէական կաթողիկոսները միայն մինչև 1876 թ. հիւսիս էին այդ եկեղեցում: Տեսնելով այդ անյարմարութիւ-նը այն ժամանակվայ հոգովեական կաթողիկոսնե-րի պրիւատ Մաքս Միլան Օրդովսկի, խնդրեց և հրաման ստացաւ. կառավարութիւնից մի նոր եկեղեցի շինել Վուկիայում՝ ցառկապէս հոգի-մէական կաթողիկոսի համար. եկեղեցին շին-ված է Նիկապէտիկայի փողոցի վրա և կրում է Ս. Պողոս-Պետրոս անունը: Իսկ Միջի-փողոցի եկեղեցին հայ կաթողիկոսների սեփականութիւնն է և այդ իրաւունքը նորից հաստատված է Բարձրագոյն հրամանով 1893 թ. մայիսի 14-ին: Այստեղ, որպէս պաշտօնապէս հաստատված ծը-խական քանանա, ծառայում է հ. Գաբրիէլ վ. Նահապետեան և ամեն կիրակի ժամը 10-ին լինում է մայրենի լեզուով պատարագ և քարոզ: Ուրեմն պարզ է, որ Թիֆլիսի հայ-կաթողիկոս հա-մայնը՝ իր սեփական եկեղեցին ունենալուց յե-տոյ կարիք չունի մի նոր եկեղեցի շինելու:

Երևան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեզ հաղորդում են, որ նոյեմբերի 30-ի և-րեկոյեան, ժամը 7-ին կոնսիստորիայում կայա-ցած Թիֆլիսի հայ քանանների արարչութեան գլխավորների ընդհանուր ժողովը՝ մի տարվայ հաշիւ տալու և ապագայ տարվան նախահաշիւը հաստատելու (և ոչ ընկերութեան դրամադուլթը բաժանելու, ինչպէս յիշված էր «Մշակում»)՝ Վարչութեան ներկայացրած թերթի հաշիւաւորու-թիւնից երեւաց, որ ոչ ներկայ և ոչ անցեալ ութամեայ հաշիւները ընդամենը չեն վերանորո-գող յանձնաժողովի անդամների կողմից, ուստի ընդհանուր ժողովը որոշեց նոր ընտրվելիք հաշ-ւետես անդամներին յանձնելու. ամբողջ հաշիւ-ների ընդհանրութիւնը և նոր վարչութեան միջոցով հետեանքը ընդհանուր ժողովին ներկայացնելու: Թերթի և դէմ խօսակցութիւններից յետոյ՝ հրա-ժարված վարչութեան անդամների փոխարէն զաղտնի քուէարկութեամբ ընտրվեցին հետեանք Նոր անդամները—արժ. Յովհաննէս քաչ. Մար-տիրոսեանց, Սահակ քաչ. Սահակեանց (Մոր-նու), Գրիգոր քաչ. Աղանեանց, Յովսէփ քաչ. Տէր-Պետրոսեանց, Աշոտ քաչ. Թէմուրազեանց, Սա-հակ քաչ. Սահակեանց (նորընծայ) և Յարութիւն քաչ. Նուրիսեանց. իսկ զրանց անձնափոխանորդ-ներ՝ Յովհաննէս քաչ. Քաղաքեանց, Գալուստ քաչ. Արտեմեանց և Գրիգոր քաչ. Մանուկեան: Վերա-ստուգող յանձնաժողովի երեք անդամների ընտ-րութիւնը յետաձգվեց հետեանք ժողովին՝ ժամա-նակի սղութեան պատճառով: Ժողովը վերջա-ցաւ ժամը 10¹/₂-ին:

Մեր ընթերցողներին յայտնի է, որ Ախալը-աբի դաւաճում վերջին երկու տարվայ ընթաց-քում զանազան դիւղերում կատարվում էին փորձեր նոր բոյսեր բնակելու նպատակով: Ներ-կայ 1898 թ.ին փորձեր արվել են տասներեք դիւղերում առանձին կտոր հողերի վրա: Այդո հետեանքներ տուին վիկա, երեք ուկ և առւոյտ բուսցնելու փորձերը: Եթէ հետեանք փորձերը նոյնպէս աշուղ լինեն, տեղական ժո-ղովուրդը, որ խոտաբույսերի կարօտութիւն ու-նի, կը սկսի մտցնել իր տնտեսութեան մէջ այդ նոր բոյսերը: Ամենալաւ հետեանքներ ստացվե-ցին Արաբկա և Բոզդանովկա գիւղերում: Յան-կալէ է, որ այդ տեսակ փորձեր կատարվէին և ուրիշ դաւաճներում և այն ոչ պատահաբար, այլ կանոնաւոր և սխտեմաթաքական կերպով:

Ներկայումս Թիֆլիս են հաւաքվել զանազան տեղերից հարկային տեսուհիներ՝ խորհրդակցելու նոր մտցնվող արդիւնաբերական հարկի և ուրիշ հարկային խնդիրների մասին: Ժողովը կը տեի մի քանի օր:

Թիֆլիսի այգեգործական դպրոցի մանկավար-ժական խորհուրդը մտադիր է մտցնել դպրոցի մէջ արհեստների ուսուցումը. դպրոցի վար-չութիւնը համոզվել է, որ մի քանի հասարակ արհեստների դիտութիւնն անհրաժեշտ է այգե-գործների համար: Փոքր կալուածներն անկարող են ամեն մի շնչին և թեթեւ գործի համար հրաւրել զանազան արհեստաւորներին. իսկ ար-հեստ դիտող այգեգործները կարող են ապա-ծամբելն կատարել և այդ դրոճերը: Մանաւանդ արհեստներն օգտաւէտ են այն մարդկանց հա-մար, որոնք ապագայում պէտք է գործեն ինք-նուրոյն, իրանց համար:

Լրագրիւններ հաղորդում են, որ հարաւային Ռուսաստանի քաղաքական դպրոցներում որոշված է օտար լեզուների շարքում մտցնել և անգլիա-կան լեզուի դասաւանդութիւնը:

Ինչպէս յայտնի է, դիտութիւնների ակադե-միան ձեռնամուկ է եղել Պուշկինի հեղինակու-թիւնների հրատարակութեան: Խմբագրութիւնը յանձնված է Լ. Ն. Մալկովին, որը գեղեցիկ կերպով հրատարակել է Բատիշկովի հեղինա-կութիւնները: Պուշկինի հեղինակութիւնների ա-ռաջին հատորը, մայրաքաղաքի լրագրիւնների խօսքով, արդէն պատրաստ է և լոյս կը տեսնի եկող տարվայ սկզբին:

Նոյեմբերի 27-ին Պետերբուրգում յանկարծա-կի կրկնվեց այդ քաղաքի համար սովորական դարձած դժբաղդութիւնը — հեղեղը: Դիւերվայ ժամը 11-ի մօտ ծովի կողմից սկսեց սաստիկ քամի փչել, որ յետ էր տանում ջուրը դէպի Նեւա գետը: Զուրը դուրս եկաւ ափերից և սկսեց որդեղ փողոցները, լցնել աների նկուղ-ները: Այդ տեղերում ապրող աղքատ ազգա-ւորակութիւնը դուրս թափվեց փողոցները. ա-յահով չէին և առաջին յարկերի բնակիչները, որոնք ստիպված եղան բարձրանալ վերի յար-կերը: Ոստիկանութիւնն աշխատում էր օգնու-թեան համեմալ ազգաւորակութեան: Պետերբուրգի լրագրիւնների վերջին համարներում դեռ դժբաղ-դութեան սկիզբն է նկարագրվում և դեռ յայտնի չէ, թէ ինչ վնասներ է հասցրել հեղեղը մայրա-քաղաքին:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԹԻՐԻՔԻԱՅԻՑ

Կ. Պօլիս, նոյեմբերի 13-ին

Դամասկոսի մէջ գերման կայսեր եղած ըն-դունելութեան նմանը ցարդ տեսնուած չէ, ինչ-պէս կը պատմեն: Թանկալին ընանքը մատուցեք են նորին վե-հափառութեան՝ տեղին երեւել թուրքերուն կող-մէն և չեղել հանդէսներն ու լուսավառութիւն-ներ կատարելու են: Յիշակերտ մը, որ Բալթիքի պատմական աւերակներուն մէջ կանգնուեցաւ, սուլթանին հրամանով, յանուն նոյնի վեհափա-ռութեան՝ կայսեր ու կայսրուհայն, միապաղաղ մարմարէ կոթով մ'է՝ դարդարուած գերման կայսրութեան զինանշանովն և Արդիւ-Համիդի թուապովը, որու ներքե քանդակուած է հետե-նալ յիշատակարանը՝ թուրք և գերման գրերով. «Արդիւ-Համիդ II, սուլթան օսմանեանց՝ առ-իւր օգնութեամբ բարեկամին՝ Վիլհելմ II՝ կայսր Գերմանիոյ և թագաւոր Բուսիոյ, և առ կայս-րուհին Ապուստոս-Վիկտորիա, ի յիշատակ իրենց փոխադարձ և անաղայլակ սիրոյն և այցելու-թեան նոյնի կայսերական վեհափառութեանց ի Բալթիք, յամին 1898 Նոյեմբերին:

Դամասկոսի մէջ—Կ'ըսէ «Tamps»—ամենաշեղ հայեկերպի մը մէջ, Վիլհելմ II՝ բանախօսու-թիւն մը ընելով, ներքողեան մը կարացեք է՝ Խալափութեան Երվալէ՝ սուլթան Սալաէդդինի մասին: Այս գովաբանական ծառը՝ որքան խան-դավաւեր է տեղւոյն իսլամներն՝ անքան ալ դարձանք պատճառը է Գերմանիոյ մէջ, այն պատճառաւ, որ մինչև ցարդ չէ լուսւած երբեք այդ տեսակ խոստովանութիւն մը այնպիսի վե-հապետի մը բերնէն, որուն գերմանիկ կայսր ու թագաւոր լինելը՝ սիրելի է իրեն: Նոյն իսկ Գեր-ման լրագրիւնները—կը յաւելու «Tamps»-ի մէջ ալից և Vorwärts, որ բրիտանիկութեան համար ընաւ սիրտաբան չեն մաշեցներ, պատմութեան էջերին կորսուած այդ մարը ի վեր հանելով՝ կը-սեն՝ թէ՛ «հին» տարրիական բան. ժամանակները որքան փոխուած են. և յիշմացս ժամանակաց, որքան յեղաշրջում գերման կայսեր դադափա-րներու և բնութեան:

«Ամենքն ալ գիտեն, որ այդ սուլթան Սալա-էդդինը՝ XII դարու վերջին յիշատակին մէջ, հիմնեց ժամեղական հզօր պետութիւն մը՝ իր մէջն ամփոփելով Նիկայոսը, Պալեստինն ու

Սուրիան: Տիբերական պատերազմին մէջ խոր-տակեց բրիտանիայ Երվալէները. գրաւեց ճըշ-մարիտ Խալը, բրիտանիական իշխանութիւնը կործանեց, տիբեց Երուսաղէմի և բովանդակ Պալեստինի: Այն տեղէն դուրս հանելու համար Սալաէդդինը, հարկ եղաւ, որ կայսր Ֆրէդէրիկ Բարբարուս՝ Գերմանիոյ մեծութեան ու միու-թեան ներկայացուցիչը, արևմտեան բրիտանիա-ներու օժանդակութեամբ՝ ձեռնարկէ երրորդ խա-չակրութեան մը, յորում գերման կայսրն իր կեանքը կորսնցուց և սուլթան Սալաէդդին յաղ-թական դուրս գալով՝ բրիտանիական սուրբ տեղեաց տէր հանդիսացաւ:

«Նւ, հիմա, Արևմտեան բրիտանիաներու քա-նակները խորտակող այդ սուլթանն է՝ դր գեր-մանական նոր պետութեան կայսրը՝ այդքան փառաց ի փառս կը բարձրացնէ: Գրիտանիու-թիւն և ջերմեանդութիւն ծախող մեր բիւզան-դական մամուլն ինչ կ'ըսէ այս բանին: Իբրև «բրիտանիայ ուխտաւորին» մը՝ ինչպէս մեծ ըն-դունելութիւն ըրաւ այդ կայսրը, և ինչպէս էր համաձայնի անպիսի կայսեր մը, որ ուրիշ դա-րու մը քրիստոնեայ ուխտաւորները ոչնչացնող սուլթանի մը համար ներքողեաններ կը կարգայ: Նոսման ամսնոց չուրի մը—կը յարէ «Tamps» —Վիլհելմ II-ի այցելութեան ժամանակ Պոլիս գտնուելով, որ տպաւորութիւններն ու դիտող-թիւնները կը յայտնէ «Hilfe» հանդէսին մէջ՝ դր ինքը կը խմբագրէ, յորում, գերման գործաւոր-ներու երեկոյթի մը մէջ՝ ի Պոլիս, տեղի ունեցած խօսակցութեան մը նկարագիրն ընելով՝ կ'ըսէ՝ թէ «այդ գործաւորներին շատերը եւստուն, քառասուն տարի է ի վեր է որ իրենց գերմանիկ աշխատու-թիւններն ի գործ կը դնեն թուրքերու, հեռա-ներու, յոյներու և հայերու մէջ, և հենց այս վերջիններուն և անոնց վրայ կատարուած վեր-ջին նոր կոտորածներուն վրայօք խօսուած ժա-մանակն էր, որ գերմանացի բրուդ վարպետ մը, որ տասնեկինը տարիէ ի վեր Պոլիս կը բնակի, Անատոլիս ալ պտուած է, մեր դէմը բաղմած՝ հետեանք մտքով խօսեցաւ:

«Նս—ըսաւ—բրիտանիայ եւ և դիտեմ որ ընկերին սէրը՝ պատուիրանաց առաջինն է: Այ-սու հանդերձ՝ կ'ստեմ որ թուրքերը լաւ բան ե-րբին հայերը ջարդելով: Թուրքը ուրիշ կերպով չէ կարող ինքզինքը պաշտպանել հայուն դէմ, որ ամենաանարգ միջոցներով կը չանաղործէ իր անշահախորդութիւնը, ծուրութիւնն և իր պա-տուախիւրական պակասութիւնները: Հայը՝ աշ-խարհին վրայ գտնուած հպատակներին ամե-նէն վատն է: Նա կը ծախէ իր կինը, կը ծախէ իր մանկամարդ աղջիկը, կը դողանայ եղբորմէն: Բովանդակ Պոլիսը բարդապէս վարակուած է հայերէն: Նոր օսմանեան բանկին վրայ յարձա-կեցան՝ մեքը դուրսն էինք և դիտեմք թէ ինչպե-ս եղաւ: Վաթիվի հայերուն ոչ որ բան մը ըրաւ, բոլոր կուլը օր թ օ դ քս հայերուն դէմ էր, վատն զի անուղղաներ միայն ասոնք են: Արտեմ թէ Փոքր-Ասիայի մէջ գտնուող հայերն աւելի լաւ են. անդղկայիններուն հնարած սուտն է այս: Այնտեղ ալ հայն է միայն յափշտակողը: Գրիս-տոնեայ գերմանացիները հայ տղաքներ կը կրկեն, բայց բնաւ օգուտ չունի. այդ տղաքներն ալ միւսներուն պէս խաբեաններ կը դառնան յետոյ: Հայերու դէմ անձնապաշտպանութեան ուրիշ օ-րինաւոր միջոց չի կայ: Օրինաւոր միջոցը թուր-քին ընտրածն է:

«Հայերնակցին սոյն յայտարարութիւնը—կը յա-ւելու Նոսման—բոլոր ներկաներէն հաստատու-թիւն գտաւ, և երբեք ասոր հակառակ ձայն մը չի լսուեցաւ:

Տաճկաստանը՝ գերմանական երկիր մը ընելու համար ասկից աւելի լրիւ յայտարարութիւն մը չեն կարող ընել այդ սիկարեան գերմանները...

Կիրակ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Radical» լրագիրը հաւատացնում է, որ վճարեկ դատարանի ընտելութիւնն արդէն պար-զապէս երևան է հանել, որ Հանրի համախոհ էր Եւտեքսազիլի: Ապացուցված է, որ Հանրի տարե-կան 30 հազար ֆրանկի մը ծախսում, այն ինչ նա տարեկան միայն 8 հազար ֆրանկ եկամուտ ունէր: Հանրի ձեռք էր բերում դոկումէնտները և տալիս էր Եւտեքսազիլին, որը ծախում էր այդ դոկումէնտները օտար պետութիւնների զինուո-րական ատտաչէների վրա:

Պիկարի հարցաբնութիւնն արդէն մօտ եր-կու շաբաթ է, որ տեսնւ է: Երեքշաբթի երեկոյե-ան դատարանը հարցութիւններ հնթարկեց գե-ներալ Գալիֆէին, որը Պիկարի նախկին հրա-մանատարն է և մինչև այժմ էլ համակրում է նրան և յայտնի է որպէս վերաբնութեան կող-մակից: Լաբորի առաջարկեց վկայ կանչել գե-ներալ Լիկլերին, որը Տունտունն է գտնուում:

—Յուսակալ լրագրիւնները հրատարակեցին Պե-տերբուրգից ստացված մի հեռագիր, որով հա-ղորդվում է, թէ ռուս գեներալ Պոտեմկինի ճա-

հապարհ ընկած Կրեմլի տանը թաղաւոր Կայսրի ինքնազիր նամակը արքայադուր Գեորգիին համար: Գեորգիին համար կը սպասուի արքայադուր գալուստը Կայսրի նամակը նրան յանձնելու համար:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՅ ԿՈՐԵԱԿԱՆՈՒԹԻՒՆԵՐ

ԿՐՕՆՇԱՍԻ, 1 ղեկավարներ: Նոյեմբերի 30-ին, թիւ 10-ին ընկած ժամանակ, «Константин» բառարկէ վրա պայթիւն տեղի ունեցաւ: Սպանված են 9 զինուոր, վիրաւորված են 3 օֆիցեր, որոնցից մէկը ծանր կերպով: Ղեկավարները ծանր կերպով վիրաւորված են 7 զոյր: Պայթիւնի պատճառը յայտնի չէ:

ԱՄՍՏՆԻՍԻ, 1 ղեկավարներ: «Handelblatt» հաղորդում է, որ Էստէրնայի, որը գտնվում է Ամստերդամում, ուրիշի անունով, այս օրերս ծանապարհ է ընկնում Ամստերդամ:

Կ. ՊՈԼԻՍ, 1 ղեկավարներ: Մեծ Իշխան Նիկոլայ Նիկոլայիւնը Տէնց որ կը գալ այստեղ, մինչև եկեղեցու օժտումը կայացել: Նիկոլայ-Քիտիլ: Այստեղի թիւրքաց լրագրիւնը որդունում են Մեծ Իշխանի այցելութիւնը, որպէս ապացոյց Ռուսաստանի բարեկամութեան: Նիկեղեցու օժտումը կը կատարի բոլորական էկզարխը, տիեզերական պատրիարքի ներկայութեամբ:

Արքայադուր Գեորգի «Ամփոփող» նաւով կը գալ Միլոս և այնտեղի ֆրանսիական ծովային տակաւ նաւով կերթայ Սուդան:

Սուլթանը ունիւրդութեան ժամանակ խոստացաւ Միացեալ-Նահանգները դեսպանին լուծել հայկական խառնակութիւնները ժամանակ մնալով ամբերկական քաղաքացիները վարձատրութեան հարցը:

ՊԱՐԻՉ, 1 ղեկավարներ: Պատգամաւորների ժողով: Սոցիալիստ Գրուստէ հարցադրում է անում Իրէյֆուսի գործի մէջ զլիւսուր շտաբի կատարած անհամեստ վարձուքների մասին: Նա կարող է լրագրական զանազան յօդուածներ, որոնք, նրա խօսքով, բոլորում էին զլիւսուր շտաբից: (Ստատիկ ազդեցակ. մի քանի պատգամաւորներ ջերմ կերպով միմանց մէջ վիճում են, մի քանիսն ըստնեցնեցի օգնութեան են դիմում: Նախագահը կարգի է հրաւիրում մի քանի պատգամաւորներին): Գրուստէ բարունակում է աղաղակի մէջ: Նա յիշեցնում է մայր Սէն-Սթիւէնի նաւ պատահած դէպքի մասին, որը մի ամսվայ բանտարկութեան դատաւարութեց՝ մի լրագրիւն արգելված տեղեկութիւն հաղորդելու համար: Մի քանի օրից յետոյ «Intransigeant» լրագրում տպվեց մի յօդուած, որի մէջ խօսվում էր գերմանական կայսրի նամակի և կոմս Միլոստէրի տեսակցութեան մասին Կապիթան-Պրիւիէի հետ: (Աղմուկ): Դէ-Մէն պատահում է, որպէս զի պատգամաւորների ժողովին հարցնեն՝ թէ կարող է արդեօք շարունակվել այդ բանի ընդհատումը: (Ծափահարութիւններ): Դիւլիւի ասում է թէ հետեօրը իրաւունք ունի խօսելու ինչ բանի մասին որ կամենում է, բայց, որպէս զի կառավարութեան գլուխ, ինքը բողոքում է սաստիկ խօսելու այն տոնի դէմ, որի նշանակութիւնը հետեօրը չէ չափել: (Ջերմ ծափահարութիւններ): Դէրուէրդ — Իյէք ամբիւնից (Աղմուկը կրկնապատկւում է): Փրէյսին է ասում է, որ եթէ ինքը գուշակել կառուցանար Գրուստէի հարցադրումի բովանդակութիւնը, ինքը մի ամսվայ յետաձգում կը պահանջէր: (Ծափահարութիւններ): Գրուստէ շարունակում է կարգալ լրագրական յօդուածները և աւելացնում է, «Ծանրութեան կենտրոնը այժմ ոչ թէ զինուորական միլիտարութեան մէջ է գտնվում, այլ ուրիշ տեղում: Գաղանի դժուար մէջը ծաղկելով իրան՝ գերմանական կայսրի կողմից...» (Ջերմ բողոքներ): Դէշանէլ առաջարկում է հետեօրին չը խառնել օտար պետութիւնների թաղաւորները, նոյնպէս և հանրապետութեան նախագահի անունները վիճաբանութիւնների մէջ, այլապէս ինքը, նախագահը, ստիպված կը լինի հարցնել պատգամաւորների ժողովից, թէ արդեօք կարող է հետեօրը շարունակել իր ճառը: (Ծափահարութիւններ): Գրուստէ կարող է «Gaulois» լրագրի մի նկատողութիւնը, որը խօսում է այն դժուարութեան մասին Իրէյֆուսի գործի մէջ, որոնք վերաբերում են զանազան անձնաւորութիւններին, և անուանված է Ռուսաստանը, Ֆրանսիայի գաշնակիցը: (Նոր բողոքներ): Գրուստէ ասում է, որ ինքը չէ հաւատում այդ մեղադրանքներին, բայց կամենում է ցոյց տալ լրագրիւնների բռնած ընթացքը: Այդ մի և նոյն լրագրիւնները Խալիլայի վրա էլ էին յարձակվում: Հետեօրը յիշեցնում է

«Հաւատի գործակալութեան» նորերս հաղորդած այն լուրի մասին, որի մէջ ասված էր, թէ Դէլիաստէ ստիպված էր ներողութիւն խնդրել գերմանական դեսպանից: (Սաստիկ բողոքներ): Լէմբր-դէ-Վիլլէ — Դէշէք ուղում: Անհանրին է որ և է արտաքին քաղաքականութիւն գործունէութեան այդպիսի եղանակի ժամանակ: Գրուստէ պատասխանում է, որ ինքն իրաւունք ունի ընդհատել ամբիւնից մի գործ, որ վերաբերում է հարցնելին, և բերում է արտաքին գործերի միլիտարի հաղորդագրութիւնը: Հետեօրը յիշեցնում է, որ այդ հաղորդագրութեան մէջ խօսվում էր կոմս Միլոստէրի մասին: (Աղմուկ): Սաստիկ բողոքներ: Դէշանէլ խնդրում է հետեօրին վերադառնալ հարցին: Գրուստէ — «Յետոյ գործի մէջ խառնեցին և Աւստրո-Ունգարիային: «Gaulois» նորերս ասում էր, որ դատարանական գործի մէջ է այդ պետութեան զինուորական ատտաչէի նամակը: Նա Տէնց նրա համար խօսք խնդրեցին, որպէս զի բողոքում այդ յօդուածների դէմ, որպէս զի ապացուցանեմ, թէ լրագրական արշաւանը սկսվեց մի քանի կողմերից այն նպատակով, որպէս զի չը թող տան, որ ճշմարտութիւնը երևան գալ, և որ այդ արշաւանը աւելի ևս զօրեղանում է: Հետեօրը հարցնում է — արդեօք կառավարութիւնը դիտարկութիւն ունի թող տալ, որ օրէնքի ծանրութեան կենտրոնը զինուորական միլիտարութիւնից տեղափոխվել զլիւսուր շտաբ և Պարիզի նահանգապետի մօտ. արդեօք դեռ երկար կը տանի ապստամբների մի այդպիսի վարձուքը և ինչ է մտածում նա. կառավարել երկիրը յանուն հանրապետութեան թէ յանուն եղուիտներին: (Ծափահարութիւններ ծաղկելով ծախակողմի: Սաստիկ բողոքներ մնացած նորտարանները վրա): Փրէյսին է բարձրանում է ամբիւն: Նա չեմ հասկանում — ասում է նա — ներկայ հարցմունքի ոչ օգնուր, ոչ նպատակը: Զինուորական միլիտարութեան վրա բարդվում է այնպիսի յանցանք, որը նա չէ ընդունում: Եթէ անդուշտութիւններ կատարված լինէին, ինքը կարող է կանգնեցնել նրանց, բայց ինքը բողոքում է այն ընդհանրացման դէմ, որ անվում է ամբողջ գործի վերաբերմամբ (Ծափահարութիւններ): Այդ յայտնութիւններն անարդար են և անդուշտ: Անարդար են այն պատճառով, որ գործը նուիրված է իր պարտականութեան և անընդունակ է այնպիսի գործերի, որոնց համար յանդիմանում են նրան: Անդուշտ են այն պատճառով, որ կարող են մտցնել մեր զինուորական հաստատութիւնների մէջ քաղաքական սիրել (Ծափահարութիւններ): Պարլամենտի հայրենասիրութիւնը թող չի տալ, որ գործի մասին այդ տեսակ ընդհատումը ինքներ լինեն: Փրէյսին է վճռողապէս բողոքում է, որ մեղադրում են ընդհանուր շտաբը և Պարիզի նահանգապետին՝ օրէնքի դիտարկութեան համար: «Ջորքի վրա յարձակվողները — աւելացնում է ճառարիտը — յարձակվում են նրան իսկ միլիտարութեան վրա:» (Ծափահարութիւններ): Դիւլիւի նկատում է, որ պարլամենտը կարող է վերջ տալ ընդհատումը և պաշտպանել միլիտարի ցանկութիւնը, որի նպատակն է չը խառնել գործը վիճաբանութիւններին մէջ՝ միայն նրանով, որ ընդունի հերթական հարցերին անցնելու պարզ բանաձևը: Այդ բանաձևն էլ ընդունվեց 463 ձայներով ընդդէմ 18-ի: Նիստը փակվեց: ԲԵՐԼԻՆ, 1 ղեկավարներ: «Frankfurter Zeitung»-ի մէջ գտնվում է Լօնդոնի «Observer» լրագրի անոնսուր հետաքրքիր, որի համաձայն «բողոքում» գրվել է 1894 թ-ի մեծ զորահանդէսից ընդ առաջ և պարունակում էր այն իսկական զեկուցումը, որ Շվարցկոպֆին արել էր նրա ստիւրական գործակալը, որի անունն ամենքին յայտնի է, ուստի և աւելորդ է նրա անունը տալ: Գործակալն ստանում էր տեղեկութիւններ Հանրիկի: Հանրին հաղորդող և ներշնչող էր, մի ուրիշ — միայն միջնորդ-կատարող՝ ճիշդ ձևով անց էր կացնում այդ տեղեկութիւնները թղթի վրա և կամ ինքն էր յանձնում գերմանական զինուորական կցորդին, կամ Լըմբրիսի — Պիկարի միջոցով, որ դրանից յետոյ մեռաւ տարօրինակ հանգամանքներում: Բողոքում անդուշտութեամբ ուղարկվեց ոչոստով և ընկաւ: Կորդէի ձեռքը, որ խուզարկու գրասենեակի զլիւսուրի օգնականն էր: Երբ բողոքը բռնված աստեղը վերադարձվեցին միլիտարութեանը, մեծ յուզմունք առաջ եկաւ: Հանրին նախադրուշացրեց մասնակից-գործակալներին. դրանից յետոյ տեղի ունեցաւ մայր Էստէրնայի Շվարցկոպֆին առած հռչակաւոր այցելութիւնը, որի ժամանակ Էստէրնային սպանաց սպանել Շվարցկոպֆին կամ անձնասպանութիւն գործել: Խորանանի

տակիւրայի և կեղծած զօկումներները միջոցով իսկական յանցանքները կասկած զցեցին Գրէյֆուսի վրա: Կեղծ զօկումներները համոզեցին Մերսիէին, Գոնդին և Բուադէֆֆրին, թէ Գրէյֆուս յանցաւոր է դաւաճանութեան մէջ: Բայց բաւական չէր մասնացոյց անել միայն Գրէյֆուսին. նրա դէմ գործածվեց մամուլը և զտնվեց Գրիվսոնի «Libre Parole»-ը, որը կուրացած առեւտրութեամբ, կատարեց Էստէրնայի յանձնարարութիւնը և ամբողջ աշխարհի առաջ յայտնվեց Գրէյֆուսի անունը, իբրև մատնիչ: Գեորգիները, միլիտարները և ամբողջ աշխարհը խաբված էին:

ԿԱՆԵՍ, 1 ղեկավարներ: Ծովակալները կոչում հրատարակեցին, որի մէջ հաղորդում են, թէ Գեորգի իշխանը նշանակված է ծայրագոյն կոմիսար երեք տարով և ստվծանի ծայրագոյն իրաւունքները ճանաչելու պայմանով:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 1 ղեկավարներ: Հակաժամադրատալին յանձնաժողովը յայտնում է, որ Հնդկաստանից հասած տեղեկութիւններին նայելով, Բոմբէյի շրջանում նոյեմբերի 5-ից մինչև 11-ը ժանտախտը գործողացաւ, այնպէս որ նորից նշանագահան 6,162, մեռան 4,825 զոյր, որ ասել է թէ հիւանդացումները աւելացել են անցեալ շաբաթվանից 312-ով, իսկ մահացութիւնը — 472 դէպքով:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ

Դեկտեմբերի 1-ին		
Լօնդոնի վրա 10 ֆունտ արծէ	93	75
Բերլինի վրա 100 մարկ	45	70
Պարիզի վրա 100 ֆրանկ	37	10
Պոլսի վրա 100 ֆրանկ	—	—
Մադրիդի վրա 100 ֆրանկ	—	—
Բոստոնի վրա 100 ֆրանկ	6	7
4% պետական ընդուն	100%	—
4% ներքին փողաւորութեան	100%	—
3 1/2% քաղաք. փող. կալ. բանկ	95%	—
4 1/2% վկայակ. փող. հող. բանկ	99%	—
5% պետական երկաթուղ. ընդուն	297%	—
Նոյրի կերպով	258%	—
5% քաղաք. փող. կալ. բանկ	218%	—
5% պետական երկաթուղ. ընդուն	—	—
Պետերբ., քաղ. կալ. փող. 5%	100%	—
Ստիւկայի քաղաք. կալ. փող. 100%	—	—

Շաբաթ, ղեկավարներ 5-ին, Թիֆլիսի ժողովարանի դահլիճում տեղի կունենայ

Պ Ա Ր Ա Հ Ա Ն Դ Ե Ս

ԿՕՏԻԼԻՐՆ - ՄՕՆՍՏՐՈՎ

ՅՕԳՐԱԿ ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՒՀԵԱՅ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Տոմսակների գինը՝ 2 ռ. 10 կ.

Սկիզբն է 9 ժամին երեկոյեան:

Տոմսակները վաղօրոք կարելի է ստանալ Կարուձիկ դպրոցում (Գանձակայա, տ. № 25), իսկ պարահանդէսի օրը՝ Փողովարանի շէնքարի մօտ:

(Ե. Տ. Շ.) 2—3

ԹԻՖԼԻՍԻ ԲԱՂԱՔԱՅԻՆ ՈՒՊՐԱՎԱՆ ԵՐԵՎԱՆԻ ԿԱՅԱՆՈՒԹԻՒՆ

Վերայի, Դաւիթօփայա մասի և Սօլոյակի բնակիչներին, որ ներկայ ղեկավարների 3-ին և 4-ին — Հինգաթիւնի և ուրբաթ, երեկոյեան ժամը 7-ից մինչև առաւօտեան ժամը 8-ը ըրի մասնակարարութիւնը կընդհատվի, որովհետեւ այդ միջոցում պէտք է փոխվեն ջրի խողովակները, ուստի և բնակիչները հրաւիրվում են ջրի պաշար վերցնել յիշեալ ժամանակամիջոցի համար. իսկ ցերեկները ջրի մատակարարութիւնը կը կատարվի սովորական կարգով:

(Շ. Տ. Շ.) 2—3

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET C-ie

ՖՐԱՆՍԱԿԱՆ ՆԱՎԱԳԱՅՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԵ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԵՅԻՆ ԲԱՐՍԵՆ, չորեքշաբթի օրերը, երկու շաբաթ մի անգամ, սկսած յունվարի 25/6-ի չորեքշաբթից:

Եւ հակառակը՝ Բաթումից Մարսէյ, մոտեցող Տրապիզոն, Սամսոն և Պոլիս: Մեկնում է Բաթումից՝ չորեքշաբթի, 9/21 ղեկավարների ՍԻՐԿԱՍԻ չորեքշաբթի, նաւապետ ԳԱՐԻԲ: Եւ այսպէս շարունակաբար, երկու շաբաթ մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին ծախց յետոյ: Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ տրվում են սովորականից պակաս գինով:

Ապրանքների և ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ ստանալու համար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակալներին:

ԲԱՐՍԵՆՈՒՄ — պ. Վիկտոր Դ'Արնոն, Նաբէրէժնայա: ԹԻՖԼԻՍՈՒՄ — պ. Օ. Գ. Բարեկենդանեան, Սիւնի փող. Նախկին Արծրունու քաղաքապետ: ԲԱՐՍԵՆ — պ. Ս. Գիւրգենյան, Կօլիւրեանկինայա հրապարակ: ՆՕՎՈՐՈՍԻՅԱՎ — պ. Մեկսիօր Հերչեյրօղերին: (Ե. Տ. Շ.) 9—20

1870 թ. մարտի 27-ին ԲԱՐՁՐԱԳՈՅՆ հաստատված

Առեւտրական-Ապահովագրական Ընկերութիւնը

Ը Ն Դ Ո Ւ Ն Ո Ւ Մ Է

Կրակից — ամեն տեսակ շարժական և անշարժ ստացուածքներին:

Ապահովագրութիւն — ապրանքներ տեղ հասցնելու — գետերի, ծովերի վրայով և ցամաքային ճանապարհով:

Ապահովագրութիւն՝ կեանքի, զրամա գլուխներ և եկամուտներին: Կանոնները պայմանները, գրաւոր և բերանացի բացատրութիւնները կարելի է ստանալ Թիֆլիսում գլխաւոր գործակալ Ֆէօդօր Ալեքսանդրովի Ի վան օֆի գրասենեակում, Սօլոյակի, Սաղօփայա փողոց, տուն № 64, Տեղեֆոն № 345, Նահանգապետի վերահսկումը Վիտոր Գիւրգենյանի, Կօլիւրեանկինայա հրապարակ փողոց, տուն № 16 և Ընկերութեան Վարչութեան մէջ Սոսկալայան, Նիկոլայայ, տուն Բոստանօղլու, ինչպէս նաև Ընկերութեան գործակալների մօտ ուսուց կայսրութեան քաղաքներում:

(Ե. Տ. Շ.) 5—10

Օգէսայի	—	—	99%	—
Թիֆլիսի	—	—	—	—
Թիֆլիսի կալ. բանկ	6%	—	—	—
Նոյրի	—	5%	99%	—
Քուլմայի կալ. բանկ	6%	—	101	—
Նոյրի	—	5%	100	—

Խաբարի՝ ԱԼԷՔՍԱՆԻՐ ԲԱՆԿԱՅԻՐ
Հրատար.՝ ԱՐՄԵՐՈՒՆԻ ԺԱՌԱՆԳՆԵՐ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Բ. Ժ. ՎԱՀԱՆԱՐԺՐՈՒՆԻ
ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ՀԻՒՆԳՆԵՐԻ
մասնագիտաբար բ գի, կոկորդի, բթի և
ակաւիչի նիւնդութիւններով:
Առաւօտեան 9—12 ժ.
Երեկոյեան 4—7 ժ.
Գործիւնկի պրօպ. № 28, տ. Աղաժօլի:
6—15

ԹԻՖԼԻՍԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՆՈՒՆՅՈՒՆ
Ժ ա լ ո Վ ու մ ե ն ՝ Բ. Կ.

- 1) Լ. ՍԱՐԳՍԵԱՆՑԻ՝ «Այց Թիւրքաց Հայաստանին» (սակաւարկ) . . . — 60
- 2) Լ. ՍԱՐԳՍԵԱՆՑԻ՝ «Ժողովրդի կրթութեան գործը մեղանում» . . . — 20
- 3) Ջ. Ս. ՄԻԼԼԻ՝ «Աղատութեան մասին» 1 20
- 4) Ս. ԱԻԵՏԻՔԵԱՆՑԻ՝ «Որդանդայի դատը» — 80
- 5) Ս. ՍԱՐԳՍԵԱՆՑԻ՝ «Աղուլեցոց բարբառը» 2 — 7—12

ЖЕНЩИНА-ВРАЧЪ
В. І. АНТУШЕВИЧЪ
Практикуетъ въ г. Елисаветполѣ.
Пріемъ больныхъ ежедневно отъ 10 до 12 часовъ дня. Набережная рѣчки Ганжинки, д. Ерицпохова, рядомъ съ домомъ Директора гимназіи.
(т. 5. 5.) 6—10